ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2023.2-5

Հիմնաբառեր. *տնային տնտեսություն, դրամական եկամուտներ, սպառողական ծախսեր, պարենային ապահովություն, կենսամակարդակ*

Յուրաքանչյուր հասարակության բարեկեցիկ կյանքը բնութագրող էական բաղադրիչ են տվյալ երկրի տնային տնտեսությունների դրամական եկամուտները: Այդ դրամական եկամուտներն են, որ դառնում են տնային տնտեսության սպառողական ծախսերի ֆինանսավորման հիմքը և ձևավորում հասարակության պարենային ապահովության ֆինանսական կարողությունը: Հասարակության դրամական եկամուտները և դրանց միջոցով սպառողական ծախսերի ֆինանսավորումը կենսամակարդակի կարևորագույն բնութագրիչ են ամեն մի պետության համար: Եվ այս տեսանկյունից, Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ:



Գագիկ ԲԱԴԱԴՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը («Հակաճգնաժամային կառավարում»), ապա մագիստրատուրան («Գործարար վարչարարություն»): Այժմ ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ է: Ուսմանը զուգահեռ, եղել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական խմբի անդամ: Ներկայում «Փարվանյան Քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության ֆինանսական տնօրենն է, ինչպես նաև, որպես փորձագետ աշխատում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչությունում: Հեղինակ և համահեղինակ է 15-ից ավելի գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0001-6026-6204

Տնային տնտեսությունների կենսաապահովման աղբյուրը ստացվող եկամուտներն են: Ի հաշիվ ստացվող դրամական եկամուտների՝ տնային տնտեսությունները հնարավորություն են ունենում ֆինանսավորելու իրենց սպառողական ծախսերը՝ այդպիսով ստեղծելով պայմաններ այս կամ այն չափով բավարարելու իրենց սպառողական պահանջմունքները:

Հայաստանի Հանրապետությունում տնային տնտեսությունների անվանական դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով 2021 թվականին կազմել են ամսական 76,058 ՀՀ դրամ: Նշյալ ցուցանիշը 2012-2021 թվականներին գրանցված ամենաբարձր արդյունքն է: Ավելին, դիտարկվող ժամանակահատվածում այն յուրաքանչյուր տարի գրանցված աճի կուտակային արտացոլումն է (գծապատկեր 1):



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Անվանական ամսական դրամական եկամուտները տնային տնտեսության մեկ շնչի հաշվով[1]

Ինչպես տեսնում ենք, 2012-2021 թվականներին ՀՀ-ում տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով անվանական ամսական դրամական եկամուտները յուրաքանչյուր տարի աճել են: Աճի միջին ցուցանիշը եղել է 4,111 ՀՀ դրամ, իսկ աճի միջին տեմպը՝ 8%: Բնականաբար, առաջին հայացքից, յուրաքանչյուր տարի արձանագրված աճը բավական դրական երևույթ է, բայց հարկ է նաև արձանագրել, որ նշյալ իրավիճակը կենսամակարդակի բարձրացման համար անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է, քանի որ հարց է առաջանում՝ արդյո՞ք նման ծավալների աճը բավարար է չեզոքացնելու գնաճի հետևանքները:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ ՍԳԻ-ն (հունվար-դեկտեմբերը հունվար-դեկտեմբերի նկատմամբ) և տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական եկամուտների աճի տեմպը[2]

[1] ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2013-2022 թթ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1530, https://armstat.am/am/?nid=82&id=1642, https://armstat.am/am/?nid=82&id=1747, https://armstat.am/am/?nid=82&id=1877, https://armstat.am/am/?nid=82&id=2010, https://armstat.am/am/?nid=82&id=2125, https://armstat.am/am/?nid=82&id=2238, https://armstat.am/am/?nid=82&id=2361, https://armstat.am/am/?nid=82&id=2461, https://armstat.am/am/?nid=82&id=2549:

[2] ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2013-2022 թթ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1530, https://armstat.am/am/?nid=82&id=1642, https://armstat.am/am/?nid=82&id=1747, https://armstat.am/am/?nid=82&id=1877, https://armstat.am/am/?nid=82&id=2010, https://armstat.am/am/?nid=82&id=2125, https://armstat.am/am/?nid=82&id=2238, https://armstat.am/am/?nid=82&id=2361, https://armstat.am/am/?nid=82&id=2461, https://armstat.am/am/?nid=82&id=2549:
The World Bank, https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?end=2021&locations=AM&start=2002, 4/26/2026.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ՀՀ ՍԳԻ-ն (հունվար-դեկտեմբերը հունվար-դեկտեմբերի նկատմամբ) և քաղաքային ու գյուղական տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական եկամուտների աճի տեմպը[3]

Այս պատճառով անհրաժեշտություն է առաջանում համեմատելու ՀՀ-ում սպառողական ապրանքների գնաճը ցույց տվող սպառողական գների ինդեքսը տնային տնտեսությունների՝ մեկ շնչի հաշվով դրամական եկամուտների աճի տեմպի հետ: ՀՀ ՍԳԻ-ն (հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածը նախորդ տարվա հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածի համեմատ) և տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական եկամուտների աճի տեմպը ներկայացված են գծապատկեր 2-ում:

Դիտարկելով գծապատկեր 2-ը՝ պարզ է դառնում, որ 2012-2021 թվականներին ՀՀ-ում ՍԳԻ-ն տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական եկամուտների աճի տեմպը գերազանցել է ընդամենը 2 անգամ՝ 2019 և 2021 թվականներին, ավելին, այդ տարեթվերին քննարկվող երկու ցուցանիշների միջև տարբերությունը եղել է բավականաչափ փոքր: Այսինքն՝ սա այլ հավասար պայմաններում ենթադրում է, որ ՀՀ-ում տնային տնտեսությունների եկամուտները փոփոխվել են նույն արագությամբ, ինչ գնը:

Թեև նշյալ իրավիճակը վերագրելի է ՀՀ բոլոր տնային տնտեսություններին, սակայն ակնհայտ է, որ պատկերը չի կարող ամբողջությամբ նույնը լինել գյուղական և քաղաքային բնակչության համար միաժամանակ՝ պայմանավորված եկամուտների տարբերակմամբ (մասնավորապես՝ 2021 թվականին քաղաքային բնակչության մեկ շնչի հաշվով դրամային եկամուտները շուրջ 1.2 անգամ գերազանցել են գյուղական բնակչության միևնույն ցուցանիշը, իսկ 2012-2021 թվականներին այդ ցուցանիշի միջինը կազմել է 1.3): Այդ իսկ պատճառով հարկ ենք համարում անդրադառնալ այդ համեմատությանն ըստ այդ երկու դասակարգման՝ ըստ գյուղական և քաղաքային բնակչության (գծապատկեր 3):

Գծապատկեր 3-ից ակնհայտ է դառնում, որ նախորդիվ քննարկված՝ 2019 և 2021 թվականների բացառությունները պայմանավորված են եղել համապատասխանաբար՝ քաղաքային և գյուղական բնակչության եկամուտների աճի համեմատաբար ցածր տեմպերով: Այսինքն՝ այլ հավասար պայմաններում, փաստորեն, և՛ գյուղական բնակչության, և՛ քաղաքային բնակչության եկամուտների աճի տեմպերը 2012-2021 թվականներին միայն մեկական անգամ են զիջել ՍԳԻ-ին:

[3] ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2013-2022 թթ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1530, https://armstat.am/am/?nid=82&id=1642, https://armstat.am/am/?nid=82&id=1747, https://armstat.am/am/?nid=82&id=1877, https://armstat.am/am/?nid=82&id=2010, https://armstat.am/am/?nid=82&id=2125, https://armstat.am/am/?nid=82&id=2238, https://armstat.am/am/?nid=82&id=2361, https://armstat.am/am/?nid=82&id=2461, https://armstat.am/am/?nid=82&id=2549:
The World Bank, https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?end=2021&locations=AM&start=2002, 4/26/2026.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ՀՀ տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով անվանական ամսական եկամուտներն ըստ դեցիլային խմբերի[4]

Սակայն, վերոդիտարկյալ ցուցանիշները միայն առաջին հայացքից են տպավորություն ստեղծում, որ տնային տնտեսությունների եկամուտների աճը չեզոքացրել է գնաճը, քանի որ հարաբերական ցուցանիշները, որքան էլ որ արտացոլում են բավականաչափ կարևոր տեղեկություններ, միևնույն է, հիմք չեն տալիս պնդելու, որ ՀՀ-ում տնային տնտեսությունների եկամուտների աճը բացարձակ արժեքով բավարար է գնաճը հաղթահարելու համար: Ավելին, հարց է առաջանում՝ ստացված եկամուտները տնային տնտեսությունների ո՞ր հատվածում են բավարարում սպառողական ծախսերի ֆինանսավորումը: Այս հարցին պատասխանելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է դիտարկել տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով եկամուտներն ըստ դեցիլային խմբերի (գծապատկեր 4):

Դեցիլային խմբերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով դրամային եկամուտները չափազանց տարբերակված (դիֆերենցված) են: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ 2021 թվականին ամենաբարձր եկամուտ ունեցող 10% բնակչության միջին ամսական եկամուտը մոտ 14 անգամ գերազանցում է ամենացածր եկամուտ ունեցող 10% բնակչության միջին ամսական եկամուտը: Ավելին, բնակչության 80%-ի եկամուտները ավելի քիչ են, քան 2021 թվականին ամենաբարձր եկամուտ ունեցող 10% բնակչության միջին ամսական եկամտի կեսը: Նմանատիպ պատկեր է գրանցվել նաև նախորդող 10 տարիների ընթացքում: Մտահոգիչ է այն, որ 2012-2021 թվականներին դիֆերենցման աստիճանը շարունակաբար միայն բարձրացել է: Եկամուտների անհավասարության մեծացման հանգամանքը տեսանելի է նույնիսկ գծապատկեր 4-ի դիտարկմամբ, երբ ցուցանիշների միջև տարբերությունը շարունակաբար ընդլայնվում է ճառագայթային տարածմամբ: Նշյալ անհավասարության մեծացման հանգամանքը հիմնավորվում է նաև շարքերի միջին քառակուսային շեղման ցուցանիշի շարունակական աճով (գծապատկեր 5):

Ակնհայտ է, որ եկամուտների մակարդակների միջև առկա անհավասարությունը ՀՀ-ում շարունակաբար աճում է, որը, բնականաբար, սպառողական պահանջմունքները բավարարելու կարողության

[4] ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2013-2022 թթ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1530, https://armstat.am/am/?nid=82&id=1642, https://armstat.am/am/?nid=82&id=1747, https://armstat.am/am/?nid=82&id=1877, https://armstat.am/am/?nid=82&id=2010, https://armstat.am/am/?nid=82&id=2125, https://armstat.am/am/?nid=82&id=2238, https://armstat.am/am/?nid=82&id=2361, https://armstat.am/am/?nid=82&id=2461, https://armstat.am/am/?nid=82&id=2549:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների նկատմամբ դեցիլային խմբերի շեղումները[5]

տեսանկյունից, բացասաբար է անդրադառնում հասարակության լայն հատվածների վրա:

Մտահոգիչ է նաև այն, թե ինչպիսին է կապը առանձին դեցիլային խմբերի և նվազագույն աշխատավարձի միջև: Հայաստանի Հանրապետությունում 2012-2021 թվականներին տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով՝ բնակչության կեսից ավելիի միջին ամսական դրամական եկամուտները մշտապես ցածր են եղել դիտարկվող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ նվազագույն ամսական աշխատավարձից (գծապատկեր 6):



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձը և տնային տնտեսությունների՝ նվազագույն աշխատավարձից ցածր եկամուտներ ունեցող դեցիլային խմբերը[6]

[5] ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2013-2022 թթ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1530, https://armstat.am/am/?nid=82&id=1642, https://armstat.am/am/?nid=82&id=1747, https://armstat.am/am/?nid=82&id=1877, https://armstat.am/am/?nid=82&id=2010, https://armstat.am/am/?nid=82&id=2125, https://armstat.am/am/?nid=82&id=2238, https://armstat.am/am/?nid=82&id=2361, https://armstat.am/am/?nid=82&id=2461, https://armstat.am/am/?nid=82&id=2549:

[6] ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2013-2022 թթ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1530, https://armstat.am/am/?nid=82&id=1642, https://armstat.am/am/?nid=82&id=1747, https://armstat.am/am/?nid=82&id=1877, https://armstat.am/am/?nid=82&id=2010, https://armstat.am/am/?nid=82&id=2125, https://armstat.am/am/?nid=82&id=2238, https://armstat.am/am/?nid=82&id=2361, https://armstat.am/am/?nid=82&id=2461, https://armstat.am/am/?nid=82&id=2549:
ՀՀ օրենքը նվազագույն ամսական աշխատավարձի մասին, 17.12.2003, հոդված 1 (այդ թվում՝ բոլոր փոփոխությունները), http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1860&lang=arm:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

ՀՀ-ում տնային տնտեսությունների միջին ամսական սպառողական ծախսերը և տնային տնտեսությունների՝ միջին սպառողական ծախսերից ցածր եկամուտներ ունեցող դեցիլային խմբերը[7]

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 6-ի տվյալներից, 2012-2021 թվականներին ՀՀ-ում տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով անվանական դրամական եկամուտները 10 դեցիլային խմբերից 6-7-ում ցածր են եղել նվազագույն ամսական աշխատավարձից, որը իր բնույթով այն նվազագույն գումարն է, որն անհրաժեշտ է նորմալ կենսագործունեություն ծավալելու համար: Փաստորեն, ՀՀ-ում տնային տնտեսությունների եկամուտները հիմնականում չեն բավարարում բնականոն կենսագործունեություն ծավալելուն: Հետևաբար՝ այս պարագայում դժվար է ակնկալել հասարակության կենսամակարդակի բարելավում:

Կարևոր հարցադրում է, թե քննարկվող 10 խմբերից քանիսի պարագայում է հնարավոր ամբողջությամբ ֆինանսավորել ՀՀ-ում տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով անվանական միջին ամսական սպառողական ծախսերը*:

Գծապատկեր 7-ի դիտարկումից պարզ է դառնում, որ այս պարագայում ևս իրավիճակը բարվոք չէ, քանի որ 2021 թվականի դրությամբ տնային տնտեսությունների 40%-ի դեպքում փաստացի անհնար է նույնիսկ ֆինանսավորել միջին սպառողական ծախսերը: Այնուամենայնիվ, արձանագրենք, որ 2012-2021 թվականներին այս առումով արձանագրվել է որոշակի դրական տեղաշարժ (միջին սպառողական ծախսերից ցածր եկամուտներ ունեցող խմբերի տեսակարար կշիռը նվազել է), բայց առկա վիճակը, միևնույն է, մտահոգիչ է:

Եվ այս ամենից ելնելով՝ ծագում է ևս մեկ կարևոր հարց. ՀՀ տնային տնտեսությունների ո՞ր մասը կարող է իր եկամուտների հաշվին գոնե ֆինանսավորել տնային տնտեսությունների համար հաշվարկված միջին ծախսերը՝ սննդամթերք ձեռք բերելու նպատակով (գծապատկեր 8):

Գծապատկեր 8-ի տվյալներից ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում փաստացի տնային տնտեսությունների 10%-ը նույնիսկ չի կարող սեփական եկամուտների հաշվին ֆինանսավորել սննդամթերքի ձեռքբերման միջին սպառողական ծախսերը: Սա, բնականաբար, յուրաքանչյուր պետության, մասնավորապես՝ ՀՀ-ի համար լրջագույն խնդիր է, քանի որ, փաստորեն, բնակչության 10%-ը չի ստանում անգամ 23,532 ՀՀ դրամ եկամուտ՝ որպես

[7] ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2013-2022 թթ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1530, https://armstat.am/am/?nid=82&id=1642, https://armstat.am/am/?nid=82&id=1747, https://armstat.am/am/?nid=82&id=1877, https://armstat.am/am/?nid=82&id=2010, https://armstat.am/am/?nid=82&id=2125, https://armstat.am/am/?nid=82&id=2238, https://armstat.am/am/?nid=82&id=2361, https://armstat.am/am/?nid=82&id=2461, https://armstat.am/am/?nid=82&id=2549:

* Անվանական սպառողական ծախսերը ներառում են պարենային և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև ծառայությունների ձեռքբերումները:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 8

ՀՀ-ում տնային տնտեսությունների՝ սննդամթերքի ձեռքբերման միջին ամսական ծախսերը և տնային տնտեսությունների՝ այդ ծախսերից ցածր եկամուտներ ունեցող դեցիլային խմբերը[8]

անհրաժեշտ սննդամթերքի ձեռքբերման ծախս:

Այսպիսով՝ ՀՀ տնային տնտեսությունների եկամուտների և սպառողական ծախսերի ֆինանսավորման վերաբերյալ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. ՀՀ՝ ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով դրամական անվանական եկամուտները հարաբերական արժեքով փոփոխվում են՝ գնաճի տեմպին համընթաց: Փոփոխման դրական տեմպ առկա է բոլոր դեցիլային խմբերում: Նման իրավիճակն այլ հավասար պայմաններում դրական երևույթ է, սակայն բարձր կենսամակարդակի ապահովման գործընթացում՝ անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման:
2. ՀՀ տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով անվանական դրամական եկամուտները բավականաչափ տարբերակված են, ինչը հանգեցնում է սոցիալական բևեռացման՝ մի շարք բացասական սոցիալական հետևանքներով հանդերձ:
3. ՀՀ-ում տնային տնտեսությունների կեսից ավելիի մեկ շնչի հաշվով անվանական դրամական եկամուտները ցածր են նվազագույն աշխատավարձից, շուրջ կեսի չափով (40%) տնային տնտեսությունների եկամուտները ցածր են միջին սպառողական ծախսերից, և 10%-ի դեպքում եկամուտները չեն բավարարում նույնիսկ սննդամթերքի ձեռք բերման միջին սպառողական ծախսերի ֆինանսավորմանը: Սա, բնականաբար, խոր սոցիալական բևեռացման և ցածր կենսամակարդակի հիմնավոր ապացույց է:

Նշյալ խնդիրների լուծման նպատակադրումները պետք է կենտրոնանան տնային տնտեսությունների անվանական դրամական եկամուտների աճի ապահովման վրա: Սակայն, նշյալ աճին անհրաժեշտ է հաղորդել որոշակի որակ՝ էքստենսիվ աճը փոխարինելով ինտենսիվով: Աճի ապահովման համար անհրաժեշտ է ակտիվացնել պետության սոցիալական քաղաքականության այն գործիքները, որոնք միտված կլինեն եկամուտների համեմատաբար ցածր մակարդակ ունեցող հատվածների սոցիալական վիճակի բարելավմանը և եկամուտների ավելացմանը:

[8] ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2013-2022 թթ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1530, https://armstat.am/am/?nid=82&id=1642, https://armstat.am/am/?nid=82&id=1747, https://armstat.am/am/?nid=82&id=1877, https://armstat.am/am/?nid=82&id=2010, https://armstat.am/am/?nid=82&id=2125, https://armstat.am/am/?nid=82&id=2238, https://armstat.am/am/?nid=82&id=2361, https://armstat.am/am/?nid=82&id=2461, https://armstat.am/am/?nid=82&id=2549:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը նվազագույն ամսական աշխատավարձի մասին, 17.12.2003 (այդ թվում՝ բոլոր փոփոխությունները), http://www.parliament.am/legislation.php?sel=-show&ID=1860&lang=arm
2. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2013 թ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1530
3. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2014 թ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1642
4. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2015 թ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1747
5. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=1877
6. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2017 թ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=2010
7. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2018 թ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=2125
8. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2019 թ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=2238
9. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2020 թ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=2361
10. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2021 թ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=2461
11. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2022 թ. հունվար-դեկտեմբեր, https://armstat.am/am/?nid=82&id=2549
12. The World Bank, https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?end=2021&locations=AM&start=2002, 4/26/2026

Гагик БАДАДЯН
Аспирант кафедры управления, АГЭУ

ПУЛЬС ЭКОНОМИКИ

ДЕНЕЖНЫЕ ДОХОДЫ И ПОТРЕБИТЕЛЬСКИЕ РАСХОДЫ ДОМОХОЗЯЙСТВ В РА

Существенным компонентом, характеризующим благополучную жизнь любого общества, являются денежные доходы домохозяйств данной страны. Именно эти денежные доходы становятся основой финансирования потребительских расходов домашних хозяйств и формируют финансовые возможности для обеспечения продовольственной безопасности общества. Денежные доходы общества и финансирование через них потребительских расходов являются важной характеристикой уровня жизни каждого государства и в этом плане Республика Армения не является исключением.

Ключевые слова: *домохозяйство, денежные доходы, потребительские расходы, продовольственная безопасность, уровень жизни*

Gagik BADADYAN
PhD Student at the Chair of Management, ASUE

PULSE OF THE ECONOMY

CASH INCOME AND CONSUMER EXPENDITURES OF HOUSEHOLDS IN THE RA

An essential component characterizing the well-being of any society is the cash income of the households of the given country. The cash income received by households serves as the basis for financing their consumption expenditures and shapes the financial capacity for food security of the society. The cash income of the society and the financing of consumption expenditures through it are an important characteristic of the standard of living for every nation. In this respect, the Republic of Armenia is not an exception.

Keywords: *household, cash income, consumer expenditures, food security, standard of living*